

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՈՒՏԴ 947.925

Ա. Ա. Մահակյան

**Նոր դիպարկումներ ի լրումն Մովսես Խորենացու կենսագրության  
(անունը, ծննդավայրը, թարգմանչական գործը)<sup>1</sup>**

(Ներկայացված է ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Լ.Ա. Աբրահամյանի կողմից 27/V 2009)

**Առանցքային բառեր.** *Մովսես Խորենացու պատմագրություն, պատմության խմբագրություն, պատմահոր ծննդավայր, քերականության մեկնություն*

Երբ հայաստանում IX դարի կեսերին նորից բարձրանում է նախարարական րների աշխուժացման ու թագավորության վերանորոգման այիքը, աննախադեպ աճում է հեղափոխությունը Մովսեսի ու նրա պատմագրի հանդեպ, որովհետև վերջինս դառնում էր այդ քաղաքական շարժման հիմնական ոգևորիչը, գաղափարախոսը և րեղեկաբու աղբյուրը: Ներկայումս, Մովսես պատմահոր անունը, ժամանակի վարդապետական մրքի գնահատանքը սրանալով, հոլովվում ու կարեւորվում էր նաև աշխարհիկ վերնախավի շրջանակներում: Այս հոլովություն, ահա, Մովսեսի անվանման մեջ կարարվում է մի շար նուրբ փոփոխություն, որը ինքնաբերաբար, րարեայնորեն արմարավորվում է բոլորի գիարակցության մեջ և րեղ գրնում Պարմության վերջին<sup>2</sup> խմբագրությունում՝ որպես Մովսես Խորենացի: Ներագայում, XIX-XX դդ. հայագի-րության մեջ Խորենացի անունը հարուցում է լուրջ խնդիր ու բանավեճ, թե որրե՞ղ էր ՚Խորեն՚ բնակավայրը, ինչու՞ րեղանվան մի այլ վկայություն չկա, որին էլ ձգրում էին այս կամ այն կերպ ինքնահնար պարասխաններ րալ պարմարանները և բանասերները: Այդ գրադմունքին զուգահեռ, սակայն, դեռևս XIX դ. վերջերից, խորենացիագերները անուշաղրության են մարնել ՚Մովսես Խոյարունացի՚ անվանումը: Սկսած Գ. Տեր Մկրտչյանից, որ մի մագաղաթյա պահպանակից առաջինն է արձանագրել այս փասարը և

<sup>1</sup>Սույն գեկույցը կարդացվել է 2007 թ. Մարենադարանի գիարական նարաշրջանում:

<sup>2</sup>Նեղինակի կարծիքով Մովսես Խորենացու «Նայոց պարմությունը» (այսուհետ՝ Մ.Խ. ՆՊ) մինչ այդ ունեցել է ես մի խմբագրություն (VII-VIII դդ.):

հարցականի փակ առել իր «Նայկականք» շարքում, այն հանդիպել է Ն. Ադոնցի, Ն. Մառի, Մ. Աբեղյանի, Սրբ. Մալխասյանի, Նր. Աճառյանի և այլոց ուշադրությանը, արժանացել է առանձին հրատարակությունների (Սրբ. Մալխասյան, Ա. Աբրահամյան, Ս. Քոլանջյան), իսկ վերջերս էլ փեղ է գրել Մ.Խ. ՆՊ հայրնի քննական բնագրի նմանահանված հրատարակության մեջ՝ Աշ. Սարգսյանի լրացումներով փորձըթերցումներում [1, էջ 458]: Այժմ մեջ բերենք երկաթագիր ձեռագրի պատրաստիկը, որը պահպանվում է Մաշտոցի Մարենադարանում (ձեռ. N1875 Նարեկ, պահպանակ) և ժամանակագրվում է X դ., իսկ ավելի ճիշտ կլիներ՝ IX-X դդ. «Վկայաբանութիւն Սրբոյն Նունայ և Մանայ. Մովսիսի Խոյարունացոյ պատմութենէն», որին և հաջորդում է Ս. Նունեի պատմության առաջին կեսը՝ Մ.Խ. ՆՊ. II գրքի 86-րդ գլխից, որի փարբերցվածները հնարույր են (օր. հերոսուհու անվան ուղիղ ձևը՝ Նունի և ոչ Նունէ): Վերնագրից արդեն երևում է, որ պատմագրական հարվածն իբրև վկայաբանություն է առնված ճառընթրի կամ փոնական այլ ժողովածուի մեջ, և արագրվել է հենց նմանապիպ գրքից և ոչ թե անմիջապես քաղվել է Մ.Խ. ՆՊ-ից, իսկ դա նշանակում է, որ այդ քաղվածքն ավելի հին ժամանակից կարող է գալ, գոնե VIII-IX դդ.: Ի դեպ, փոնական ժողովածուների ձեւավորման ընթացքում «ի պատմութենէ Մովսիսի Խոյրենացոյ» հղումով շար հարվածներ են առնվել առանձին ձեռագրային շրջանառության մեջ ընդհուպ մինչև ուշ ժամանակներ: Այնպես որ, երբեմն այդ առաջին հարվածներն ավելի հին ընթերցումներ կարող են պարունակել, քան բուն պատմագիրը:

**1.1.** Ինչ է փալիս 'Խոյարունացի' ձևը, որի հիմքում ունենք Խոյարունք փեղանունը: Այն մեկ անգամ ընդմիջար վկայված է Դիոնիսիոս Թրակացու քերականագրքի հայ մեկնիչների երկերում՝ 'Խոյարոնք' ձևով [2]: Նայրնի է, որ Դիոնիսիոսի քերականության առաջին մեկնությունները սրեղծվել են V դ. Մովսեսի և Դավթի անուններով: Նայրնի է նաև, որ միջնադարյան ավանդույթը Մովսես քերականին նույնացնում է Մովսես պատմահոր հետ:

Անեզական թիվը ներկայացնող 'Աթենք' փեղանվան դիմաց հայկական օրինակներ դնելու համար Մովսես մեկնիչը բերում է 'Յրոնք և Խոյարոնք' փեղանունները: Յրոնքը Տարոն գավառի ավան է, որի մասին սրուգաբանական ավանդապատում է պահպանվել Մ.Խ. ՆՊ I գրքում (գլ. Զ), որից զգացվում է, որ հեղինակը հարուկ կարևորում է Յրոնքի պատմավիպական դերը իր շարադրանքում՝ վերջինիս ժողովրդական սրուգաբանության շնորհիվ: Յրոնքի հետ հիշարակվող Խոյարոնքը ցույց է փալիս, որ Մովսես Խոյրենացուն մականվանում փրված գյուղը կամ ավանը եղել է Մովսես մեկնիչի ուշադրության ներքո, որպես Յրոնքի կողքին փեղադրված բնակավայր, որը նոր ժամանակներում հայրնի Խոյրոնք գյուղն է: Եթե հաշվի առնենք, որ անեզական փեղանուններով հարուստ հայկական լեռնաշխարհից մեկնիչ-քերականը կարող էր շար այլ օրինակներ բերել, գոնե Աթենքի համեմատ Նայասպանում հայրնի, բայց չի բերել և ընտրել է երկու հարեւան վայրերի անուններ՝ Յրոնք, Խոյարոնք, նշանակում է, դրանում դեր է խաղացել այն հոգեբանական գործոնը, որ մեկնիչ-հեղինակը նախընտրել է, թեկուզ աննշան, բայց իրեն հարագար վայրերի անուններ: Իսկ եթե ավելացնենք, որ այդ փեղանունները

հարազատ են նաև պարմիչ հեղինակին, առաջինը՝ որպես իր հյուսած պարմական սյուժեի հանգուցակետ, երկրորդը՝ որպես ծննդավայր, կարգավի, որ մենք կամ գործ ունենք պարսահական բազմաստիճան համընկնումների հետ, կամ էլ ունենք միեւնույն անձնավորության մեջ միաձուլվող երկու Մովսես, երկուսն էլ քերական-քերթող, երկուսն էլ մեկնիչ-թարգմանիչ, երկուսն էլ նույն ուսուցիչների՝ Սահակի (Տարոնի Աշտիշատ) և Մաշտոցի (Տարոնի Նացեկաց) աշակերտ (Տարոնի Խոյարոնք): Բնական է, որ հայ գրական ավանդույթում այս միեւնույն անձը կոչվեր քերթողահայր՝ որպես առաջին քերականության սրեղծող, պարմահայր՝ որպես ամբողջական պարմության սրեղծող, փիլիսոփա՝ որպես իմաստասիրական երկերի թարգմանիչ:

**1.2.** Ակնհայտ է, որ Սահակ Պարթևը 428 թվականից պաշտոնանկ լինելով և Տիգրանի արքայազնություն 4-5 տարի անցկացնելուց հետո, 432/433 թ. վերադառնում է Նայասարան, որտեղ նրա իրավասությունը սահմանափակվում էր հայրական կալվածքներով (Բագրեւանդ, Տարոն), որտեղից էլ նա Մաշտոցի հետ ընտրել է վերջին սերնդի աշակերտներին, որոնց մի քանի տարի վարժեցնելուց հետո արքայասահմանյան ուսումնառության է գործուղել հավանաբար 436 թվականին: Եթե պարսից արքունիքը չսահմանափակեր Սահակ Պարթևի լիազորությունները և գործունեության տարածքը, վերջինս սրիաված չէր լինի աշակերտներ հավաքագրել միայն Տարոնից, ուստի և՛ նաև Խոյարոնքից: Այսինքն, չկա չարիք առանց բարիք, որովհետև եթե Սահակը իրավունք և հնար ունենար աշակերտներ հավաքել ողջ Նայասարանից, ապա դժվար թե ուսման կոչվեր պարսի Մովսեսը, ուստի և, ասված գիտի, ի՞նչ ճակատագիր կունենար հայ պարմագրությունը, կամ թե ո՞վ կլիներ հայոց պարմահայրը:

Իսկ այժմ, երբ ի հայտ է եկել Խոյարոնքի հետքը Մովսեսի կենսագրության մեջ, վստահաբար կարելի է համաձայնել հայ միջնադարյան վանական ավանդույթին, ըստ որի՝ Դիոնիսիոս Թրակացու առաջին հայ թարգմանչի և մեկնիչի պարմուն ստանում է Մովսես Խորենացին, նույն ինքը՝ Քերթողահայրը, նույն ինքը՝ փիլիսոփան (ըստ Ղազար Փարպեցու): Քանզի Դիոնիսիոսի քերականության մեջ անեզական ՝Աթենքի՛ դիմաց հայկական գուգահեռ օրինակ դիտվող Յրոնք-Խոյարոնք գույգը, իբրև առաջին հեղինակի կնիք, փոխանցվել է հետագա մեկնիչներին:

Այսպիսով՝ Մովսես Խորենացին Խոյարոնացի է, ինչպես վկայում է նարեկի երկաթագիր պահպանակը (IX դ.), Խոյարոնքը Տարոնի գավառի Յրոնքին հարեւան ավան է, որը հետագայում դարձել է Խորոնք:<sup>3</sup>

**2.0.** Նասկանալի է, որ Խոյարոնացուց Խորենացի անցման համար միայն գրավոր հոլովություն, որքան էլ աշխույժ, բավարար չէ, այն ենթադրում է նաև աշխույժ բանավոր կիրառություն, որը կարող էր լինել՝ սկսած IX դարի կեսերից: Մովսես Խոյարոնացի անվանման բարեհունչ տարբերակը առաջ է եկել անկախ որևէ խմբագրի կամքից, լեզվական արձարձման բանավոր ոլորտում, որտեղից էլ անցել է գրավորին, ճիշտ այնպես, ինչպես Խոյարոնքից առաջացել է կարճ ու

<sup>3</sup>Տեղանունների Տարոնյան շարքը ակամայից ընկալվում է նույն բառակազմական սխեմայով. Տար + ու + ք ( ցույ), Յի + ու + ոնք (վայրի էջ), Խոյար + ոնք (խոյ), Ահար + ոնք (?):

բարեհունչ ձևը՝ Խորունքը: Փաստորեն Խոյար>Խոր անցումը նույնն է երկու դեպքում էլ՝ Խոյար>Խոր+ոնք եւ Խոյար>Խոր+ունացի>Խորենացի: Քանի որ X դ. արդեն ունենք Մովսէս Խորենացի՝ անվանումը թե՛ Մ.Խ. ՏՊ վերջին խմբագրության մեջ, թե՛ այլ հեղինակների երկերում (Տովհ. Դրասխ., Սպ. Ասողիկ, 981թ. հնագույն թղթն ձեռագիր<sup>4</sup> եւ այլն), իսկ Մովսէս Խոյարունացի՝ ունենք դեռեւս IX դ., ապա հեշտ է նկատել ժամանակային այն միջակայքը (IX-X դդ.), երբ կապարվել է անվան փոփոխությունը: Նոր անվանման վերջնական փարածման ազդակ կարող էր դառնալ Մ.Խ. ՏՊ վերջին խմբագրության սրեղծումը, որպէս հեքիաս ընդօրինակման աղբյուր, նորանոր գրչությունների գաղափար՝ երաշխավորված հոգեւոր վերնախավի կողմից:

**2.1.** Թե ինչ նպատակով սրեղծվեց այս նոր ու վերջին խմբագրությունը՝ մեզ հասած գլխակարգով ու վերնագրերով, ուղղակիորեն դժվար է ասել, բայց կփորձենք:

Տայփնի է, որ IX-X դդ. մատենագրական նորմ էր դառնում շատ գործածական գրքերի գլխակարգումը եւ բնագրային հատվածների համարակալումը, որի ամենահայփնի օրինակը Ս. Գիրքն է: Այնուհանդերձ Մ.Խ. ՏՊ գլխակարգումը եւ գլխացանկերի կցումը բնագրին ամենաշատը ձեռնարու պէտք է լինէր այդ բնագիրը որպէս աղբյուր օգտագործողներին: Առաջին պատմիչը, որ մանրամասնաբար օգտվեց Մ.Խ. ՏՊ-ից նոր Պատմություն գրելու համար, Տովհաննես Դրասխանակերպցի կաթողիկոսն էր (կառ. 898-929 թթ.): Իր պատմագրքով Տովհաննես պատմիչը ոչ միայն բարձրացրեց Մովսէս Խորենացու հեղինակությունը, այլեւ նրան հոչակեց «ոճի» չափանիշ: Այդ է պատճառը, որ նա Մ.Խ. ՏՊ-ից օգտվում է ոչ միայն փվյալ թեմայի շրջանակում փեղեկություններ քաղելիս, այլեւ հեքիաս եւ իր ժամանակներին վերաբերվող փեղեկությունները Խորենացու «ոճով» պատմելիս: Բարեբախտաբար «Տովհ. Դրասխանակերպցին եւ Մ.Խ. ՏՊ» խնդիրը իր գիտական լուսաբանումն է ստացել Աշ. Սարգսյանի օգտաշատ գրքում [4],<sup>5</sup> ըստ որի՝ պատմիչ-կաթողիկոսը սրեղծել էր Մ.Խ. ՏՊ-ից օգտվելու մի ամբողջ «աշխատանոց»: Ահա նման մեթոդով աշխատելու համար պէտք է որ զգացվեր պատմահոր գիրքը մանր գլխաբաժանումների ենթարկելու եւ գլխացանկերով օժտելու անհրաժեշտությունը: Իսկ այդ գործը կարող էր անգամ անել ոչ թե ինքը, այլ իր հանձնարարությամբ մեկ ուրիշը, որպէս գլխակարգող-խմբագիր:

Տավանաբար կաթողիկոս պատմիչի պահանջը կատարելուց զատ՝ խմբագիրը կյանքի է կոչել նոր գրչագրեր՝ նոր գլխակարգով ու հեղինակի բարեհունչ անվանումով՝ որպէս ավելի արժեքավոր ու հոգեւոր կենսորոնից հանձնարարելի գաղափար-օրինակներ,

<sup>4</sup>Ափսոսալ կարելի է, որ Մ.Խ. ՏՊ բնական բնագրի լրացված հրատարակության մեջ փեղ չեն գրել հնագույն թղթն ձեռագրի (981թ.) խորենացիական հատվածի («Յաղագս Նոյի» եւ այլն) փարբնթերցումները: Ի դեպ, Դավիթ քահանայի կազմած ժողովածուի այդ ժամանակագրական հատվածից երևում է, որ վերջինիս կազմող Անանիա Շիրակացին գիտեր, որ Մ.Խ. փվյալ հատվածը սերնդարանական ցանկերի անհամաձայնությամբ հանդերձ, քաղել է ոչ թե Մար Աբաս Կարինայից, այլ «ի յուշմագունէ եւ յընթերցասիրէ ումնմե՛ Ասորոյ» - այսինքն Անդրեաս ժամանակագրից (IVդ.): Այս նույնացումը դիպուկ նկատել է Ռ. Վարդանյանը՝ իրավամբ որոշելով, որ Անդրեասի գործը հայերեն է թարգմանվել դեռեւս 429-435 թթ. միջև [3, էջ 823]:

<sup>5</sup>Գրքի «Տովհաննես Դրասխանակերպցու «Տայոց պատմությունը» եւ Մովսէս Խորենացին» վերնագիրը չի արտացոլում գրքի իրական բովանդակությունը, որի համար ավելի ճիշտ կլինի «Մովսէս Խորենացու «Տայոց պատմությունը» եւ Տովհաննես Դրասխանակերպցին» վերնագիրը:

որոնք էլ, արագ փարածվելով հեփազա հարյուրամյակում, մեզ են հասել, ցավոք, առանց այլընտրանքի (եթե չհաշվենք Մովսես Խոյարունացու միակ պատրաստիքը):

Մաշտոցի անվան Մատենադարան

## **Ա. Ա. Սահակյան**

### **Նոր դիտարկումներ ի լրումն Մովսես Խորենացու կենսագրության (անունը, ծննդավայրը, թարգմանչական գործը)**

Մաշտոցի անվան Մատենադարանի N1875 ձեռագիր — Նարեկի պահպանիչ մագաղաթն թերթում պահպանվել է հայոց պատմահոր անունը՝ որպես 'Մովսես Խոյարունացի': 'Խորենացի' անվան հիմքը կազմող 'Խորեն' տեղանուն հայրնի չէ, իսկ 'Խոյարոնքը' հիշատակվում է Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» հայկական մեկնություններում 'Յրոնք'-ի հետ միասին՝ սկսած V դ.: Քանի որ Մովսեսի ծննդավայրի նախնական անունը՝ Խոյարոնքը (հեփազայում՝ Խորոնք Տարոնի գավառում) Յրոնքի հետ հայ մեկնիչի կողմից առնվել է իբրև հունարենի անեզական 'Աթենք' տեղանվան հայերեն գուգահեռ օրինակ, ապա պետք է եզրակացնել, որ պատմահայրը օգտագործել է իրեն հարազատ տեղանուններ: Մանավանդ որ 'Յրոնքը' հիշատակվում է նաև «Նայոց պատմության» մեջ, որպես ժողովրդական վիպական ստուգարանության առարկա:

## **А. А. Саакян**

### **Новые заметки к биографии Мовсеса Хоренаци (имя, место рождения, переводческая деятельность)**

Защитный пергаментный лист (IX в.) рук. № 1875 Матенадарана им. Маштоца сохранил имя Мовсеса Хоренаци как Хойарунаци, в основе которого лежит топоним Хойаронк' Таронской области (в дальнейшем Хоронк'). Хойаронк' вместе с топонимом Цронк' упоминается армянскими толкователями Дионисия Фракийского, начиная с V в. Учитывая тот факт, что Цронк' также фигурирует в "Истории Армении" Мовсеса Хоренаци (кн. 1, гл. 6) и что до сих пор не найдено другого сведения о местности Хорен, местом рождения отца армянской историографии можно считать Хойаронк', а автором первого толкования "Грамматики" Дионисия — Мовсеса Хоренаци, как это по праву считается в средневековой армянской монастырской традиции.

A. A. Sahakyan

**New Notes to the Biography of Movses Khorenatsi  
(Name, Place of Birth, Translation Activities)**

The protective parchment sheet (9<sup>th</sup> century) of the manuscript N1875 in the Mash-tots Matenadaran has preserved the name of Movses Khorenatsi as Khoyaronatsi, based on the Khoyaronk' toponym (later Khoronk') of the Taron province. The Armenian commentators of Dionysius the Thracian mention Khoyaronk' together with Tsrnk' toponym since the 5<sup>th</sup> century. Taking into account the fact that Tsrnk' appears also in Movses Khorenatsi's "History of Armenia" (book 1, chapter 6) and that no other data are found on a locality named Khoren until now, Khoyaronk' could be considered the place of birth of the father of Armenian historiography, while the first commentary of Dionysius' "Grammar" could be authored by Movses Khorenatsi, as it is rightly considered in the medieval Armenian monastic tradition.

**Գրականություն**

1. *Մովսես Խորենացի, Պատմություն Նայոց, Եր., ՆԽՄՏ ԳԱ հրատարակչություն, 1991:*
2. *Адонц Н. Дионисий Фракийский и армянские толкователи. Петроград, 1915.*
3. *Վարդանյան Ռ. Ն. Նայոց փոնացույցը (4-18-րդ դարեր). Եր., ՆՏ «Գիտություն» հրատարակչություն, 1999:*
4. *Սարգսյան Աշ. Նովիաննես Դրասխանակերպցու «Նայոց պատմությունը» եւ Մովսես Խորենացին, Եր., Նայասարանի ԳԱ հրատարակչություն, 1991, 329 էջ:*